



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՇՈՒՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգային Պատրիարքարանի

Ա.ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸՆՑ

ԲԱՑՈՒՄ 1885 ԱՄՓՆ

ՆԻՍՏ. Ժ.

20 ՄԵԴԱՑԵՐԵՐ 1885



Կ. ՊԵՏՐՈ

1885

# ԴԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՄԱՅՐ ԳԻՒԱՆ

Տիգրան	Լֆէնտի	Եռւսուլքեան	Ա.	Արէնուլու
Յովհաննէս	»	Թորոսսեան	Բ.	»
Յարութիւն	»	Թիրեալքեան	Գ.	»
Յակոբ	»	Գուրդէն	Ա.	Արէնուլու
Ստեփան	»	Տամատեան	Բ.	»
Միհրան	»	Տէօլքմէճեան	Գ.	»



ԶԵՆՅԱՍՈՒՐՔԵԱՆ ԳԻՒԱՆ

Մատթէոս Եպիս.	Խղմիւլեան	Արէնուլու
Պարեղին	Վարդապետ	Թավթարեան
Միքայէլ	Լֆէնտի	Մամիկոնեան
Դաստիարակուրքեան Գիւան		
Պարբիւլէֆ.	Նորատունկեան	Արէնուլու
Պասպար	»	Գասպարեան
Մկրտիչ	»	Մէզպուրեան

Կալուածոց Գիւան

Յովհաննէս	Լֆ.	Թորոսսեան	Արէնուլու
Միհրան	»	Զօպանեան	
Նշան	»	Պօտանեան	

Համարակալուրքեան Գիւան

Գառնիկ	Լֆ.	Յովհակիմեան	Արէնուլու
Կարապետ	»	Սըվաճըեան	
Մկրտիչ	»	Ճանըմեան	

Յարաբերուրքեան Գիւան

Յովհաննէս	Լֆ.	Նորեեան	Արէնուլու
Համբարձում	»	Մագպուլեան	
Ուշիլէս	»	Պէրպէրեան	

Նախաձեռնուրքեան Գիւան

Յարութիւն	Լֆ.	Մէրեէմ	Գուրլի Արէնուլու
Յակոբ	»	Պօնաքեան	
Ղալար	»	Հովուեան	

Իրաւասուրքեան իւան

Յովհաննէս	Բհ. յ.	Մէրեան	Արէնուլու
Յակոբ	»	Լֆէնտի	Սըշակ
Ղալար	»	Հովուեան	

Խմբագրուրքեան Գիւան

Կարապետ	Լֆ.	Խթիւճեան	Արէնուլու
Մկրտիչ	»	Մէլիքըեան	
Համբարձում	»	Ալաճաճեան	

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲՈՅՈՒՄՆ 1885 ԱՄԻ

ՆԻՍՏ Ժ.

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազն Պատրիարք Հայու .  
ԱՏԵՆԱԳԵՑ. — Տիգրան Էֆէնտի Եռևութեան .

## ՕՐԱԿԱՐԳ

Խնդիր Կաթողիկոսական . ( Դահլիք )

Ընդ նախագահութեամբ Ա.Ա. Ա. Պատրիարք Հօր, Առենապետ Էֆէնտի առեանն  
կը բանայ ժամը 4 ին, ի ներկայութեան 60  
երեսափառաց, որոց թիւն ի վերջէ կը յանա  
գի Յօնի :

Վարչութեան Կրօնական և Քաղաքական  
Ֆողովոց անդամք մեծամանութեամբ ներկայ  
էին նստին, ի բաց առեալ Քաղ. Ֆողովոց Ա.  
Առենապետն :

## ՕՐԱԿԱՐԳ

Խնդիր Կաթողիկոսական .

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Սոյն արտասպազ նիս-  
տըն, Տեարք, Ֆողովով մեծամանութեան  
որոշմամբ յատկացած է Կաթողիկոսական  
խնդրոց մասին՝ թէ Աղդ. Վարչութեան և թէ  
Ա. Ախնողի Կողմանէ եկած տեղեկագրերն լսե-  
լու :

Ուստի կը հրաւիրեմ Առենապետ Էֆէն-

տի նախ Ընդեռանուլ Վարչութեան տեղեկա-  
զրերն և ապա Ախնողի պաշտօնագիրն :

Հետեւարար Առենապետ Էֆէնտի կըն-  
թեռնու կարգաւ նոյն պաշտօնաթղթերն :

« Հստ որում խնդիրը կը պատկանի  
Աղդ. Երեսփոխանական ֆողովոց բարձ-  
րագոյն ձեռնհասութեան, Աղդ. Կեդր.  
Վարչութեան Խառն Ֆողովս չը կընար  
յատուկ որոշում մը առ նոյն ֆողովն բե-  
րել Կաթողիկոսական խնդրոյն ընդունած  
լուծման նկատմամբ : Հետեւարար Աղդ.  
Պատկառելի ֆողովոց իմաստուն որոշման  
թողով այս պարագայիս մէջ ևս Աղդին  
կամքն արտայայտել, Խառն Ֆողովը ի-  
րեն պարտք կը համարի սակայն դիտել  
առաջ թէ ըստ որում Ամեն. Մակար Սրբա-  
զան՝ իրեւ բարձրաստիճան և երիցա-  
գոյն Արքեպիսկոպոսն Հայոց Աղդին՝ չու-

նի և չտանկը իւր վրայ ո' և է արգելք  
կամ անպատեհութեան Ամեն. Հայոց  
Հայրապեան լինելու և ըստ որումպէտք  
է ի կշխու առնուլ ժամանակիս փափուկ  
բաղմակողմանի հանգամանքներն, հարկ  
անհրաժեշտ է այնպիսի որոշման մը  
յանդիլյորում կարելիութեան սահմա-  
նէն գուրս չելնելով, Հայաստանեայց Ս.  
Եկեղեցւոյ միութիւնն և Ազգային իրա-  
ւունքն պահպանուին :

### Անդամք Ազգային կեդր. Վարչու- թեան Խառն ժողովոյ

Խորին Արք-Եպիսկոպոս  
Սիմեոն Եպօ. Սէֆերեան  
Գարեգին Վ.րդ. Թարարեան  
Յովինաննես Վ.րդ. Արշարուեի  
Տանատ Վ.րդ. Ռոկանեան  
Սուրիս Քնյ. Ստեփանեան  
Սահակ Քնյ. Տ. Սարգսեան  
Յ. Նորեան  
Գ. Նորատունիեան  
Հ. Պալլարեան  
Ա. Սարյան  
Տ. Կիւմիւշիկերտան  
Յ. Ֆրինեան  
Խ. Կամարական  
Ս. Կիւպինեան

### 28 Օդոստոս 1885

Առ Ս. Պատրիարքն Հայոց  
ի Կ. Պօլիս

« Որուսական Կառավարութեան պաշ-  
առնական գրութիւնը կը ծանուցանէ  
« թէ Որուսաց Վեհ. Կայսրն հաճեր է  
« (Կաթողիկոսական) Երկու ընտրելինե-  
« րէն Պեսաբաղեց Առաջնորդ. Մակար  
« Արք-Եպիսկոպոսն հաստատել յՍթոռ  
« Հայրապետութեան Ամենայն Հայոց,

« զոր պատիւ ունի Սինօդն ծանուցանել  
« և Զեր Սրբաղնութեան և Զեր միջոցաւ  
« համայն մերաղնէից Թուրքիոյ .  
« Այս մասին Սինօդին յատուկ դը-  
« լութիւնն պիտի ստանաք .»

Տեղակալ Նախագահի Սինոդին  
ՄԿՐՏԻՉ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ

20 Օդոստոս 1885

Էջմիածին

Նորին Բարձր Սրբաղնութեան Ամե-  
նապատիւ Պատրիարքին Հայոց Կ. Պօլոյ  
Տեառն Յարութիւն Արքեպիսկոպոսի .

Համագոյին Ժողովին Սրբաղն Ամե-  
րեակոպոսաց, Բարձրապատիւ Պարդա-  
պետաց և ականաւոր աշխարհական պատ-  
գամաւորաց գումարեան այսր ի Սուրբ  
Էջմիածին՝ շարժեալ առանձին ազգասի-  
րական հոգւով և բարեփոյթ Խորհրդա-  
ծութեամբ առ ի մի կէտ նախառակի  
պահպանելց զընդհանրական օգուտ լը-  
րութեան ազդիս, յաջողութեամբ Վեր-  
նախնամ տեսչութեան՝ յամսեանն Ապ-  
րելի տարւոյս աւարտեաց զդործ ընտրու-  
թեան Պատրիարք Կաթուղիկոսի Ամե-  
նայն Հայոց ի Մայր Տաճարի Կաթուղիկէ  
Սրբոյ Էջմիածնի . զորմէ յիւրումն ժա-  
մու ըստ կարդին օրինաց Սինօդս առա-  
ջարկեաց զերկոսին ընտրեալոն ի Հա-  
մագոյին Ժողովոյ անտիմի զըննապատիւ  
զծէր Մակար Արքեպիսկոպոսն և զծէր  
Սէլքիսեպեկ Եպիսկոպոսն ի հաստատու-  
թիւն Նորին Կայսերական Մեծութեան  
Խնմակալին ամենայն Ռուսաց :

Արք՝ Նորին Պայծառակայլութիւնն  
Տէր Կառավարչապետն քաղաքական մա-  
սին Կովկասու պաշտօնական գրութեամբ

ի 14 Օգոստոսի տարւոյս (ստացելով ի Սինօդիս ի 22 նոյն ամսոյ) Նօ. 8099. աւետեաց մեղ զբարձրագոյն տնօրինութիւն որով Թագաւոր Կայորն բարեհածեալ հաստատեալ է յերկուց անտի ընտրելոց զիմենապատիւ զծէր Մակար Արքեպիսկոպոս Առաջնորդն նոր Նախիչևանի և նի և Բեսարաբիոյ յաստիճան Պատրիարք Կաթողիկոսի Ամենայն Հայոց :

Ընդ այս փափագելի աւետիս լցեալ Անդամոց Սինօդի և Միքանութեան համայն Աթոռուոյս հոգեղուարձ ուրախութեամբ խորին զգացմամբ սրտից վերառաքեալ զգոհացողական մաղթանս առ Ամենալազորն Աստուած վասն մեծի այցելութեան տանս Հայկալեսն և Հնորհելոյ մեղ քաջարթուն հովիւ և Պետ Առաքելական Ա. Եկեղեցւոյ, որոշցաք մեծարել զօր յիշատակի հաստատութեան նորընտիր Սըրբագնագոյն Հայրապետին մերոյ ի 25 երրորդում աւոր այսր Օգոստոսի . ընդ նմին և գրեցաք առ ամենայն Գերապատիւ Առաջնորդս ի Ռուսաստան, ի Պարսկաստան և ի Հնդկաստան զայսմ Վելնախնամ շնորհայ՝ առ ի ծանուցանել սիրելի ազգայնոց մերոց և տալ յիշատակել զանուն նորին Վերափառութեան ի սահմանեալ ազօթ յեկեղեցիս : Զվերուորեալ կարդագրութենէ Սինօդս հազարդելով և Զերում Ամենապատուութեան՝ հրաւիրէ զԶեղ ծանուցանել և սիրեցեալ ազգայնոց մերոց հաւատացելոց Զերում քաջ հոլուատարութեան՝ հարացաւ որդւոցն հաւատոյ Լուսաւորչին մերոյ փափագոյաց հաստատութեան և պայծառափայլութեան Հայրապետական Աթոռուոյս : Այլ և տնօրինել զարժանն վասն յիշատակութեան անուան մեծի

Հայրապետին մերոյ Տ. Տ. Մակարաց նա'և յեկեղեցիս Հայոց Տաճկաստանի համաձայն նախնաւանդ սովորութեան և ուժիցէ Տէր ձայնի աղաւանաց մերոց և ընկալցի զիմնդրուածս մեր վասն հաստատուն պահպանելոյ զթագաւորութիւն կայսերն ամենայն Ռուսաց և մեծաղօր Տէրութեան Օսմանեան, ի ներքոյ հովանաւորութեան որոց խալազական կենօք վայելէ Ազգ մեր զաղատութիւն կենաց և զսրտոնութիւնս ազգային իրաւանց մերոց :

### ՈՂ Երուք ի Տէր,

Տեղակալ Ատենապետի Սինօդի  
ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

### ԱՆԴԱՐՔ

Մեսրովիք	Եպիսկոպոս
Յովակիլ	Եպիսկոպոս
Երեմիա	Եպիսկոպոս
Ներսես	Եպիսկոպոս
Մամբրէ	Վարդապետ

Ատենապետ — Ա. Մուշենեանց

### ի 24 Օգոստոսի 1885 ամի

և Ա. ԷջՄԻԱՆԻՆ

թիւ 2390

ԱՏԵՆԱՊԵՏ. Էֆ. — Տեսարք, յայտնի է թէ քանի տարիներէ ի վեր Արքարատեան Մոյր Աթոռոյ Պահակալին ընտրութիւնը՝ Ազգին տարարնակ մասնեց փափառանաց համաձայն արդեան մը բերելու համար՝ Ազգային ժողովս կողմանէ եղած ջանքերն այսօր տարբեր արդեան մը կը յանգին :

Իրաց այս վիճակին մէջ, մի՛ կարծէք թէ Զեղ աւրիւ խօսք պիտի ըսեմ, ոյլ միայն, Հայոսաստանեցոյ Եկեղեցւոյ բաժանում ազտանցող այս վասնդին առջև, Երեսփառան Տեարցոյ խոչեմութիւնն և Հրանտայեցութիւնն

ոլիսի հրաւերեմ։ Եւ վստահ եմ, որ, ինչոքս ուրիշ այսօրինակ խնդրոց մէջ, նոյնագույն այս անդամ պատի վիճաբանիք խնդրոյն վրայ՝ ձեռքի չթողլով Ձեր սովորական պատրիա նույն իւնն և ի նկատի ունենով միայն Ազգին սգուոն և Հայուստանեաց Եկեղեցւոյ միութեան ողահպանութիւնը։

Այժմ՝ մեր պաշտօնակիցներէն Գուրգէն էֆէնտիփի կողմանէ առաջարկ մը ներկայացած է, վերաբերմանի սոյն խնդրոյն, զոր կը ներկայեմ ժողովրդ նկատառման։

Առենագոլիր է Փէնտի կընթեռնու սոյն առողջարկութեան դիրն։

«Ս. Էջմիածնի Սինոդին պաշտօնանական գեկուցումէն տեղեկանալով՝ թէ Պետարապիոյ Առաջնորդ Ամեն. Տ. Մակար Ս. Արքեպիսկոպոս Կաթողիկոս նշանակուած է Վեհ. Զարէն, փոխանակ Ազգին մեծամասնութեան ընտրելույն, Ամեն. Տ. Մելքիոսեղեկ Ս. Արքեպիսկոպոսի, և նկատելով որ, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան այս անակնկալ ելից առջև Ազգ. ժողովը պարտաւորութիւնն է։

Ա. Պաշտպան լինել Հայաստանեաց Եկեղեցւոյ իրաւանց.

Բ. Պահպանել Եկեղեցւոյ միութիւնն.

Գ. Քրիել Ազգ. ժողովոյ արժանապատութիւնն.

Կառաջարկեմ որ Ազգ. ժողովս, խնդրոյն վրայ որ և է վիճաբանութիւն ընկել առաջ, Եկեղեցական և աշխարհական երկոտասան երեսփառաներէ բարկացեալ Յանձնաժողով մի կազմէ, որոյ պաշտօնն լինի այս ծանրակշխան խնդրոյն պարագայներն քննել մասնամասնորէն, և Եկեղեցւոյ շահուց համա-

ձայն Եղբակացութեան մը յանդելով՝ բերել լայն հանդերձ տեղեկագրով և ենթարկել Ազգ. ժողովը հաւանագութեան ։

Թանձնաժողովն պարտաւոր լինի առառաւելն տասն և հինգ օրէն բերել իւրտեղեկագիրն, և իւրաքանչիւր Երեսփո. Խան իրաւունք ունենայ մինչև ութ օրիւր կարծիքն գրաւոր կերպիւ հաղորդել Յանձնաժողովը անձնաժողովը նկատողութեան ։

Ազգային Երեսփոխան  
Յ. Գուրգէն

ԹԻՒԼՊԵՆՏԱՑԵԱՆ Ն. ԷՅ. — Կանոնական դիոսութեան մը համար խօսք կուզեմ։ — Ինչոքս որ այժմ կարգացուած առաջարկութեան գրէն աւ կերեի, անուրանալի է թէ՝ Մակար Արքաղանի հաստատումը բարեկան յուղում պահանառած է թէ Ազգին և թէ Ազգային ժողովը մէջ, ըստ որում անակնկալ էր Երկորդ քանիշատափ վաւերացումը՝ որ աեղի տուս զանազան չարժանիթներու։ Սակայն կը դիմեմ որ այսօր նոր խնդիր մը Երևան կենէ մեր տռած։ Կաթողիկոսական ընտրութեան տեղեկագրերու մէջ սովորութիւն է քուէց տուաւելութեան կարգա զըսել ընտրելուաց անուններն, մինչդեռ Արհօդին ներկայ պաշտօնադրին մէջ նախ Ամեն. Տ. Մակար Արքեպիսկոպոսի և ասս Տ. Մելքիոսին նվիրվոսուի անունները նշանակած են։ (Առ Դիւանն) Խնդրեմ, մի անգամ ևս կարգացիք պաշտօնադրոյն այդ պարբերութիւնն։

(Ատենաղպիր Էֆենտի վերստին կընթելունու զայն)

ԹԻՒԼՊԵՆՏԱՑԵԱՆ Ն. ԷՅ. — ( Ճարունակելով ) Այժմ, այս պարագայ աեղի կուտայինձ Երկմտիւ թէ մի զուցէ Էջմիածնայ Արհօդին կողմէ Ռուսից կայսեր ներկայացեալ տես-

դեկոգրայն մէջ ես , տուալին տողին վրաց գրուած լինի Մակար Սրբազնին և երկրորդին վրաց Մելքիսեդեկի Սրբազնին անուններն , ուրով ն . Աւհամախառաւթիւնն հետուերով իւր նուա խորդաց օրինակին , վաւերացուցած լինի զՄակար Սրբազնին իրը ասաւին ընտրեաւ :

Կը խնդրեմ որ նովի քան դամենայն , այս կարե որ կէտն սպարզուի :

ՓԱ.ՓԱ.ԶԵ.Ա.Ն Ս. Էֆ. — Օրինաւոր է այդ դիտուլութիւնը :

ՄԱՍԻԿՈՒԵԱՆ Մ. Էֆ. — Շատ ճշգր է .  
Հայոց Ախողը բանարարած է Աղդին իրաւունքը :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ. — Թիւլպինան է ֆինա տիի սոյն գիտուղութիւնն՝ իրը կանոնական չը կրնոր ընդունուիլ , այլ յարակից է ը ու խնդրյան : Հետեւորար երր ի խնդրի մտնենք , յայնժամ կրնանք լսել դայն :

ՁԱՅՆԵՐ — Այս , այդպէս է :

ԹԵԿՐԵԱՆ Ա. Էֆ. — Կը ինդրեմ պաշտօնակիցներս որ ուշադրութիւն ընեն ընելիք մի քանի խօսքերու :

Թիւլպինան է ֆինաի շատ կարևոր դիտուղութիւն մ' լսա : Այսօր տեղեկապիր մը կուգոյ հոս հանդերձ Գուրգէն է ֆինատի մը տուաջարկութեամբ , որոց եղանակութիւնն է ինդիրն յանձնել Յանձնաժողովոց մը քննութեան :

Աը յիշէր անշուշութ թէ երր կաթողիկոսաւ կան ընտրութեան օդն էր , Այս ժառավա խուհեմութիւն համարեց առ այս հարկ եղած կարգադրութիւնն , ինչպէս նաև պատղամաւ լուրաց առաքման գործն Ատենապետաց Դիւանին յանձել : Սակայն Ատենապետաց Դիւանն ո՛չ Պօմէն պատղամաւոր զիկեց և ոչ աւ ժողովու փափառքամասոց հարցուցաւ այսօդ կամասին այսօր ենդիրն ինդիրն Յանձնաժողովութիւնն :

Նամժողովոյ մը յանձնել կուգուի . բայց Ի՞նչ նկատողութեամբ Միթէ խնդիրն ըստ բաւարարնեն ծեծուած և ամէն ինչ յացանի չէ : Խնչ հարկ վերաբին Յանձնաժողովոյ մը յանձնել գործն , մտնաւանդ թէ նիստերնիս աւ դամակի է :

Ուստի ես կառաջարկեմ խնդիրն այս ժողովյ մէջ , ի գանգոսով նիստա վիճաբանաւթեան ենթարկել անմիջապէս , մանաւանդ թէ կայուրի խնդրի մ'աւ , այնէ Մելքիսեդեկի անուան յետապաման կիտն , որ թէս մեր աւ ուշադրութենէն չըրիպեցաւ , բայց Թիւլպէնունեն էլքինսի զայն ի յայտ ածելու քաջութիւնն ունեցաւ :

ԳՈՒՐԳԵՆ Յ. Էֆ. — ( Երբեւ առաջարկութեան տիր ) Պէտք է գիտնալ թէ այս առաջարկութեան ոգին՝ խնդիրն Յանձնաժողովու փոքր վերջանակն վճռոյն ենթարկել չէ , այլ կարեւոց համաձայնութենէ մ'զինի զայն Աղդ . Ժողովոյդ Նկատուաման և գիտուղութեան ենթարկել վերստին :

Եւ երր Թիւլպէնամեան է Ք.ի դիտուղութեան համամիտս կը գտնամի Թնկրեան է ֆինատի , տաղի խակ կը հասասատէ խնդիրն Յանձնաժողովու մը բննութեան յղելու կրկին պէտքն :

ՃԱՆԾՄԵԱՆ Մ. Էֆ. — Հարկ է գիտնալ թէ Հայաստանեաց Եկեղեցին յարեալ է Էջմիածնայ Աթոռոյն և ո՛չ թէ անօր վրաց բաղմագ Եկեղեցականին : Հետեւարար մեղ համար անձի խնդրի չկոյ այս կաթողիկոսական խնդրոյն մէջ : Ըստ Տաճկական առածին՝ գացողն ենքնիտի է , եկուն պէյ :

Ուստի ես , խնդիրն Յանձնաժողովու մը յղելու պէտքն խակ չեմ տեսներ , և կուսանարկեմ անմիջապէս քուէի դնել Սինդի տեղեկագիրն և ընդունիլ Մակար Սրբազնի կաթողիկոսութիւնն :

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՏԱՐԱՆՆԵՐԻ — ( Առողջանական համար էֆ. ) Այդ Զեր կարծիքն է :

ՍԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — ԽՆԴՐԸ պէիլ  
և Էնթոնիի խնդիր չ' . Խնդիրն Եկեղեցայ,  
Ազգի , վերջապէս մահու և կենաց խնդրի է :  
Արկու գրեր կը ներկայանան մեզ այսօր , մին  
Խառն ժաղավարն և մասն Խնդրանան Անգլիա :

Ասանցին կրոց ծանրանալ չեմուգեցր, վասն  
զի Վարչութեան, ինքն ալ կերպով մը ևր վը-  
ցային նետեր է Պայն՝ իր Ազգային ժամանց  
ձեռնհասութեան վերաբերեալ խնդիր մը, չե-  
աւեարար Վարչութեան այս ընթացքն մեղա-  
զեցին չէ: Պայով Արնապի գրոյն, կերեի թէ  
մեր Անոնդական Ս. Հարգ կուզն նկատել այս  
Ազգային ժամանց իր Գևարանայից և կամ  
Ռաւսից ուրիշ գաւառական թեմերու նման  
մօպմին մը . . .

ՄԿՐԵԱՆ Տ. Յ. ՔՀՅ. — ( ԸՆԴՄԻՉԱՄԲ )  
Աւելի՝ վար :

ՄԱՍԻԿՈՒԵԱՆ Մ. ԷՅ. — ( Եարևմանակելով ) Մինչ Ազգային ֆուլով՝ իր ներկայացուցիչ Թուրքիոյ Հայոց համայն վիճակացն , Հայաւունք ունի աւելի ձայն ունենալ կաթողիկոսական խնդրուն մէջ եւ մանրամասն լսել ընարսութեան պարագայից տեղեկաց իրն :

Արդ, ես, այդ Սինոթէն եկած տեղեկագիրն  
քերի կը նկատեմ եւ զորկ այն հանգամանք-  
ներէ զօրս պէտք է կրէ Ամենայն Հայոց Հայ-  
քաղեամի լուսութիւնը Թուրքիայ Հայոց Ազ-  
գային ժողովն ծանուցանող տեղեկագիր մը :  
Հնաեւարար այդ պաշտօնագիրն եւ ոչ իսկ  
Յանձնաժողովոյ մը յղելու պէտքն կը տես-  
նեմ եւ իմ մասիս չեղեալ կը նկատեմ զայն :

ԹԱԳՐԸՆՍԵԱՆ Ռ. Էթ. — Ըստ ամենայնի  
համամելու և Մամիկոնեան է Քիչնափի : Միայն  
պատճեն կուտած թէ՝ տեղեկացրին մէջ՝ Առ-  
ջար Արքազանի համար Ամենապատին ըստուած  
է : Իսկ Կաթողիկոսական առաջին Ծնարելոյն  
առջեւ պարզապէս Տ. Տէրիքսեղեկի Խանակ-  
ուած է : Այս կերպ խմբագրութիւն ու Աղ-

Դային արժանապատութեան համար վիրա-  
ւորիս կը նիստեմ :

ՍԸԾՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Խօսք ուղած եմ  
Երկրորդէլու համար Գուրգէն է Փէխնտիի առաջարկը, զոր յոյժ բանառոր կը գտնեմ: Արդարեւ խնդիրն այնքան բազմակողմանի է եւ միափուկ, որ Ցանձնաժողովոյ մը մէջ քննելու եւ կարծեաց փոխանակութիւն մը ընելու հարկ կայ: Ուտք է Նկատել թէ Սպառ կին-ական շահեր ունի, որոց նկատառութիւն անհրաժեշտ է եւ յախուռն որոշաւմներ կրնան լառարեր մինել մեր տարարինակ և զբարյ: Ցանձնաժողովին ոչ այլ ինչ պիտի ընէ, այլ խնդիրը սերտելով իւր ամեն պարագայիւր, ամենոււր ընդունելի եղանակ մը պիտի ներայիշէ տեղեկագրութ մը, որուն վրայ կրնանք վիճաբանիլ ի հարկին: Բայց առաջնին վիճա-անութիւնն այս ծովագոյս մէջ չընելով մնէ ըշանայեցութեամբ վարուած կը լինինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՒ. — Խոնդրոն վրայ տառակաւին խօսք ուղարկներ կան : Խւստի , եթէ Փողովդ կուզէ , չարունակենք վլճարանութիւնն , ապա թէ ոչ , ներկայացեալ առաջարկն ըստէի կը գնեմ :

ԶԱՅՆԵՐ - Քուէլի դնելէ առաջ լսուք  
ուղած ենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ուրեմնի խօսքը Դա-  
յառնական Էֆյանն է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Նախ կուզելով  
ողբեր թնդիրեան էք.ի պահ մ'առաջ Ութենա-  
կետաց Կիւանին նկատմամբ ըրած այս դի-  
ուողութիւնն թէ՝ ֆողովն թէեւ յանձնարած-  
ած է նաև պատուիրակներ դրկել ի Ա. Եջիւ-  
օճին, բայց նա չէ գործադրած ֆողովոյս այս  
բոշութիւն :

Հարկ է դիտնալ թէ կաթողիկոսական

վերջին ընտրութեան ժամանակ, Ազգային ժաղացն ոչ թէ որոշած էր պատուիրակ առաքել ի Ս. Էջմիածին, այլ նոյն իսկ առաքման պէտքն որոշելու պաշտօնն յանձնած էր Ամենապետաց Գիւանին ի հարկին Յակով, որով այս վերջինն Ազգ, ժողովոյ որոշման հակառակած չեղաւ ուստուիրակ չըրկելով :

Գալով ՈՒնողի տեղեկագրին, լսու ամենայնի համամիտ եմ Մամիկոնեան Շքի կարծեաց . ինձ համար Սինողի այդ թուղթը չեղածի պէս է :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ո. Էֆ. — Ես ալ ներկայացեալ այդ առաջարկութեան դէմ եմ, եւ կսկս թէ՝ խնդիրն Յանձնաժողովոյ մը յղելով յախուռն որոշում մը տուած պիտի լինինք :

Կը տեսնեմ թէ տակակին խնդրոյն մէջ չմտած, հրահանգներ կընդունինք ամէն կողմէ. պատուէր մը կուզայ Խառն ժողովն, պատուէր մը Գիւանէն եւ պատուէրներ Երեսփոխանաց ոմանց կողմանէ, իրբեւ թէ դպրոցականներ լինէնք . . .

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — ( Ի նայն զանգակի ) Շնորհ ըրէք, Պէրպէրեան էֆ. Զեղ նման խոհանքներ երեսփոխանէ մը չէր սպասուէր այդ տեսակ զիտողութիւնն մը : Ամէն ժամանակ ժողովոյ լրջմատթեան կոչում ընելու իրաւունք ունին ոչ միայն Գիւանն, այլ եւ իրաքանչիւր Երեսփոխան : Հետեւաբար Զեր կողմանէ առ Գիւանն եղած ակնարկութիւնն անտեղի է : — Այժմ շարունակեցէք :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ո. Էֆ. — ( Շարունակելով ) Այսակս, ամէն կրոմէ տեղայող պատուէրներուն զէմ, ես՝ իր Երեսփոխան կը բողոքեմ, իմ արժանապատութիւնն վիրաւորուած նկատելով ինչպէս նաեւ իմ մւս պաշտօնակիցներս, զի մնէք Ազգին կողմէն եկած եմք հոս : Կըտեսնէք թէ նիստն գոնիստակ է եւ շատ հանդարատութիւնն, հետեւ

ւարար այսքան հրահանգներ ու շրջահայեցութիւնք ծաղրելի կը լինին . . .

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. Էֆ. — ( Բ. Ատենապետ Քաղ. ժողովոյ ընդիմիջենով ) Կընդունիմ թէ իրաւանչիւր Երեսփոխան աղատ է ո՞ր եւ է խնդրոյ վրայ խօսելու յատենի ժողովոյս, բայց չեմ կրնար Ընդունիլի որ Ատենարաբանն ամրելի բառը գործած է, արհնարկելով Վարչութենէն եկած առաջարկի մը : Ուստի իրաւամբ կը պահանջնեմ Պէրպէրեան է ֆէնտէք որ յետս կոչէ զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — (Առ Պէրպէրեան էֆ.) Եթէ արտասանեցիք այդ տեսակ բառ մը, Պէրպէրեան է ֆէնտի, պէտք է որ ես առնուք իրաւամբ լինածն չէր բառ մը :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ո. Էֆ. — Ես ծաղրելի բառն Վարչութեան չուզեցի, այլ ըսի թէ՝ մեր այս ընթաց կրնայ ծաղրելի նկատուիլ, քանի որ ո՞չ անկարգութիւն կը տիրէ ժողովոյ մէջ, ո՞չ շփոթութիւնք, անտեղի են այս տեսակ լրատաներ . . .

ԱՂԱԲԵԳԵԱՆ Մ. Էֆ. — ( Ընդմիջմամբ ) Որուն ենթակայ եղայ ես ինքս, մի անխոհնմ ծերունի :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ո. Էֆ. — ( Շարունակելով ) Այս կաթողիկոսական խնդիրն Յանձնաժողովի մը յղել ըսելն ինդիրը թաղել ըսել է : Եւ ի՞նչ հարկ, քանի որ ամենք ալ հոս գումարուած եմք եւ նիստ կննեմք ընդ Նախադառութիւն եամբ Ա. Պատրիարքի, եւ ինդիրն ալ պէտք եղած շատ աւելի սերտած ենք : Միթէ ինդիրն Յանձնաժողովոյ յղուելով վերսախն հոս չպիտի՞ զայ եւ ինչ վիճարանութիւն որ տեղի պլտի ունենար այսօր, նոյն օրն ալ տեղի չսփի՞տի ունենայ երբ տեղեկագիր մը բերեն : Ուրեմն ինչ հարկ այսքան երկարածել խնդրոյն լուծումը :

Հետեւաբար ես կառաջարկեմ, այսօր իսկ զոնվակ նստի մէջ լինդիրն ձեռք առնուլ եւ վիճարանելով որոշման մը յանգիլ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. Էֆ. — Վարչութեան Վաեմ. Ատենապետ էֆ. անցեալ նստին առաջարկ մը բերաւ կաթողիկոսական խնդիրն դանիքակ նստի մէջ նկատութեան առնելու մասին, եւ ժողովա ալ, ըստ այնմ, որուց ի դանիքակ նիստ գումարել : Արդէն մէն մի Երևանի վայրին կզաք յնդրոյն ծանրութիւնն եւ ըստ այնմ համոզեալ եկած է հոս :

Եթէ խնդիրն Յանձնաժողովոյ մը քննութեան յանձնելք պայմանաւ որ սա իւր տեղեկադիրն որոշեալ պայմանաժամկ մը մէջ մեղքերէ, միթէ նոյն օրն ալ, ինչպէս ըստ Պէրպէրեան է Փէտնտի, նոյնին վրայ չպիտի վիճականինք . . .

ԹԻԿԻ.ՊԵՆՏԱՅԵԱՆ Ն. Էֆ. — (Ընդմիջելով) Գուցէ ոչ, զի թերեւս կարծիքներն հոշութիւն:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. Էֆ. — (Ծարունակելով) Քանի որ արդիւնքն նոյն պիտի լինի, եւ չեմ հասկնար այդ տեսակ Յանձնաժողովոյ մը նըշանակութիւնն : Եւ կառաջարկեմ, այսօր ձեռք առնուլ խնդրոյն վրայ վիճաբանութիւնն դանիքակ նստի մէջ : Իմ մասին կը խօսանամ տեղի չտալ ո եւ է անկարդութիւն :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Պէրպէրեան եւ ՄԵԼԻՔԵԱՆ էֆէնտինք կը յայտնն թէ՝ եթէ դւռնիքակ նստի մէջ վիճաբանիք խնդրոյն վրայ, ո եւ է անկարդութիւն չեներ : Բայց պէտք է գիտնալ թէ՝ Զեր Դիւանն ընաւ չէ յայտարարած թէ՝ եթէ յատենի ժողովոյ վիճաբանութիւն բացուի, անկարդութիւնք տեղի կառնեան . . .

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. Էֆ. — (Ընդմիջելով) Քաղաքական ժողովոյ Ատենապետն ըրաւ անցեալ որ այդ յայտարարութիւնն թէ՝ անկարդութեան բատրակ մը դարձած է այս ժողովի :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Խօսիք մի՛ Ընդմիջելով,

ՄԵԼԻՔԵԱՆ էֆէնտի : (Ծարունակելով) Կըսէիթէ իշխանէս այդ տեսակ յայտարարութիւն մը տեղի չունեցաւ, եթէ այդպէս ըլլար, այսօր ո՛չ դուք այս տեղ բազմած կը լինէիք եւ ո՛չ Զեր Դիւանն : Ամենքնիդ ալ Ազգին ընտրելագոյն երեափոխաններն էք եւ շատ պարագայներու մէջ խնդեմութեան առաջին օրինակն տուած էք, թէեւ աշխարհի ամեն կողմն ալ կանոն է որ տեղի ունեցած վիճաբանութեանց սաստիւթիւնք շատ անդամ ժողովոց մէջ յուղման տեղի տան :

Խակ գալով Յանձնաժողովոյ մը կազմութեան նկատմամբ Գուրգէն էֆէնտիի առաջարկութեան, այդ մասին Պէրպէրեան էֆէնտի ըրած դիտողութիւնն թէ՝ եթէ Յանձնաժողովոյ յլուի, խնդիրն աւելի կը դժուարանայ, սխալ է . Ընդհակառակն այս առաջարկի բերուած է վիճաբանութիւնն դիւրացնելու համար, մանաւանդ որ լիազօր իշխանութիւն մը չզիտի արուի անոր, այլ ընդհանութիւն, սերաւելու եւ տեղեկագրելու իրաւունք մը միայն :

Նոյնպէս սխալ է պահ մ' տուած ֆնկերեան էֆէնտիի կողմանէ տեղի ունեցած այն դիտողութիւնն թէ՝ Ատենապետաց Դիւանն չէք գործարած Ազգ. Ժողովոյ որոշումն ի մասին պատգամաւորաց առաքման, եւ առ այս Ղաղաքոսեան էֆէնտիի պատասխանն շատ օրինաւոր կը դանէ Դիւանս :

ԱԼԻՔՍԱՆԴՐԵԱՆ Մ. Էֆ. — Այդ Յանձնաժողովոյ առաջարկութիւնն պէտք էր գտնէ յետ վիճաբանութեան գար հոս եւ ոչ թէ այժմ : Իերեւելի թէ մեր բերանն դոցել կուղուի :

ԳՈՒՐԳԵՆ Յ. Էֆ. — (Երբ առաջարկութեան տեր) Ես իբր առաջարկութեան տէր, պիտի պայտապահնեմ զայն կանոնադիր ի ձեռնին — Մեր ներքին կանոնադիրն կը արամադրէ, բացի նախաքննիչ Դիւաններէ, ի հարկին կարգել նաեւ Յանձնաժողովով վահագան խնդրոց նախաքննութեան համար, եւ կար-

ծեմ, մողավն ալ շատ սպարագայից մէջ շարժած է համաձայն ներքին կանոնագրի սոյն տրամադրութեան :

Ամէնքս ալ դիտեմք թէ Ազգին ընտրեալն չէ գաւերացած եւ ոչ-ընտրեալն գաւերացած է : Այժմ երկու կարծիքներ կը տիրեն . մինչ չըմակար Սրբազնն անչափ իր կաթողիկոս, եւ միւսն չնդունիլ զայն Հետեւարար խնդիրն ծանր է եւ մին մի երեսիօնան պարատի իւր քուէն տալ կատարեալ խոճի համազմամբ, ապա թէ ոչ՝ սպատմութեան առջեւ, եկեղեցւոյ եւ Ազգին առջեւ ահաւոր պատասխանառութեան ներքեւ կը մնայ :

Ուստի կարծիքներն համաձայնեցնելու եւ եկեղեցւոյ միութիւնն անխախտ պահելու նըսպատակաւ, հարկ է կարգել Յանձնաժողով մը, որ ի հարկին Ս. Պատրիարք Հօր Նախագահութեամբ եւ Ազգային Ժողովոյ Ա. Ատենապետի Առենապետութեամբ գումարուելով, խնդիրն սերտէ, բնիչ եւ տեղեկացիր մը բերէ, առանց լիազօրութեան իրաւոնք ունենալու : Այս կիրազով միայն կարելի կը լինի կարծիքներն հաշտեցնել վասն զի անկեղծապէս կը յայտարարեմ թէ ինչ որ ալ լինի Ազգային Ժողովոյ տալիք սրուումը, պէտք է որ միամայնութեամբ տրուի :

Ս. ՆԱԽԱԳԱՅ. — Հառեցա թէ Տ. Մելքիորեկ Սրբազնն՝ որ Ազգին առաջին ընտրեալն էր, չէ գաւերացած եւ երկրորդ ընտրելին՝ Տ. Մակար Սրբազնն հաստատուած է. արդարեւ այդպէս եղած է բայց Մակար Սրբազնն ալ եկեղեցականաց ընտրելին է եւ եկեղեցականը ալ Ազգին են : Թթէ եկեղեցական աւանդութեանցնայինք, կը տեսնենք թէ եղած է ժամանակներ, յորում եկեղեցականը ի ժողով գումարուելով ընտրած են կաթողիկոսներ .

ԹԻՒԼՊՈՆՏԱՏԱՆ Ն. Էֆ. — ( Ընդիշմամբ ) Կաթողիկոսական խնդրոյն վրայ խօսք կ'ուզեմ :

Ս. ՆԱԽԱԳԱՅ. — ( Ծարունակելով ) Որոց ընտրութեան երրեմն մասնակցած են աշխարհականք, երրեմն ալ չեն մասնակցած եւ տիրող իշխանութիւնք ճանչցած եւ իր կաթողիկոս վաւերացուցած են զընտրեալուն . . . .

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — ( Ընդիշմամբ ) Հրաման կը խնդրեմ Սրբազնն Հայր, փոքրիկ զի տողութիւն մը ընելու: Ժողովու տակաւի ինչո՞ք բոյն մէջ չէ մոտած եւ ցարդ տեղի ունեցած վիճականութիւնք՝ խնդիրն Յանձնաժողովի մը յընելու կամ չ'յցելու վրայ կը դառնայ :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊէՅ. — Կը տեսնեմ թէ իւրաքանչիւր երեսիխանի խօսք կը արուի, եւ երբ Ա.Պատրիարք Հայրն խօսք կառնա, ընդույժումներ սեղի կունենան : Կը ինդիրեմ իմ պաշտօնակիցներէս որ գէթ ակնածութիւն եւ քաղաքավարութիւն ունենան առ Ս. Նախագահն մեր :

( ՑՈՒՑՈՒՄ )

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — (Առ Նար-Պէյ Սրբազնն) Զեր առ երեսիօնան ուղածած այդ յանդիմանութիւնն անտեղի է :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊէՅ. — Կատարելապէս իրաւունք ունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Երեսիօնանք ումանը ոչ թէ ն. Սրբազնութեան խօսքերն ընդհանութեան է եւ եկեղեցականը ալ Ազգին են : Թթէ եկեղեցական աւանդութեանցնայինք, կը տեսնենք թէ եղած է ժամանակներ, յորում եկեղեցականը ի ժողով գումարուելով ընտրած են կաթողիկոսներ :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊէՅ. — Միթէ՞ Թիւլպէնտատան էֆէնաին չէր որ ընդհատեց նորին Սրբազնութեան խօսքն :

ՓԱՓԱԶԵՍՆ Ս. ԷՖ. — Ռ' :

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ԿԱՐ-ՊԵՅ. — (Առ. Ա. Պատրիարք Հայոյ) Սրբազն Հայոյ, սոյն ցաւի միջադէպին համար, ի դիմաց երեակոսխանութեան, Զեր ներովաստութիւնն կը խնդրեմ:

ԴԱՅԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Առ. նար-ՊԵՅ Սբբագսն) Սրբազն, ժողովոյ եւ Ա. Պատրիարք Հօր միջեւ ո՞վ զօեր միջնորդ կարգած է, որ կենէք մեր կողմանէ ներովութիւնն խընդրելու: Մասնաւանդ թէ տեղի չունեցաւ այն տեսակ միջադէպ մը, որուէ ցաւ գգար Ա. Պատրիարքն:

(Զանազան նատարանների ընդմիջումներ)

Ս. ՆԱԽԱԳԱԶ. — Համբերութիւնն կը հաստինէք. թողէք որ խօսիմ: (Շարունակելով), Սինօդէն եկած պաշտօնագիրն եւ գարձնելու թուրքիոյ Հայոց ընդհանուր ներկայացնեցին մարտին՝ պարտիք մտածել թէ՝ ո՞ւր կերթայ այդ տեսակ յախուռն որոշման մը վերջը: Ես ցաւելու կը տեսնեմ որ այս խնդրոյն մէջ կրթքն է որ կը տիրապետէ, եւ կրքով զործ յառաջ չերթայ:

Ես ալ, կը նաև ըլլալ որ հաւտառմ պահ մ'առաջ Թիւլիքն տնտեսն է փէնտիի կողմանէ եղած դիտողութեան, բայց քանի որ Մակար Սրբազնն է վաւերացան, Ա. Սինօդն ալ, իրը յարգական ցոյց մը՝ նորա անունն անփառաստ է Տ. Մէկլիքինեկ Սրբազնի անունն:

Սրբարեւ ես ալ կը ցաւիք որ Աղջին ընտառեան չէ վաւերացած, բայց պէտք է զիսնալ թէ Տ. Մակար Սրբազնն եւս ստացած է ընտառուական ժողովոյ 16 քուէներն եւ յանձնին իւր չ'կը որ արդեք մը՝ ամենայն Հայոց Հայրապետական Գահը բազմելու, եթէ ունինք ցաւ մը, դիտողութիւնն մը Պայամենիոյ դէմ, աշխատինք նորընտիր Կաթողիկոսին միջնցաւ լսելի ընել տալ մեր ձայնն, որպէս զի ու-

րիշ անդամներ այս տեսակ յուղմանց տեղի ըլ տրուի:

Յանձնաժողով մը կարգ ելու առաջարկութիւններ կը լինի, բայց ես, իրը Պատրիարք Թուրքիոյ Հայոց և իր նպակուսու օձեալ ՚ի Ա. Եջմիածին, իմ ուխտիս հակառակ կը նկատեմ որ մեր որոշումն այսպէս երկարածդի և կը փափաքար որ դոնէ մէկ շարաթ տառչ խնդրին վերջնայ:

Ումանք ակնարկութիւններ ըրին Վարչութեան գէմ եւ սախն թէ՝ հրահանդ չենք ու զեր ընդունիլ անկից. բայց ի՞նչ կայ եղեր. միթէ Վարչութիւն մը ի հարկին իրաւունք չունի՞ այսպիսի ծանր խնդրոյ մէջ ժողովոյդ ջջահայեցութեան կոչում ընկերու: Եթէ այսպահն ալ շատ կը համարուի, ուրիմն ոչ Ա. Պատրիարքիւն կը մնայ, ոչ է ներակութանութիւն եւ ոչ ալ Պատրիարք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ա. Պատրիարք Հօր կոչմանէ եղած ոյն յայտարարութեանց մասին խօսք կուզեմ:

ՃԱՅՆԵՐ. — Քաէ՛, քուէ՛ :

ՃԱՅՆԵՐԸ ԱՆ Ս. ԷՖ. — Ներկայացեալ երկու առաջարկներն ալ քուէ՛ զրէ՛ք, Առեւնապետ է փէնտի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ա. Պատրիարք Հայոց թէեւ խօսք առաւ, բայց ոչ թէ խնդրոյն մէջ մանձելու, ոյլ խնդրոյն վիճակը բացարկելով ներկայացեալ առաջարկութեան վրաց իւր տեսթիւններն յայտնելու համար էր:

Այս մ որ Պայսնին վրաց առաջարկ մը կայ որոնք երկրորդորմաննենցաւ, ըստ օրինի նախ վիճարկանութեան վակուէ՛լ և ազա ոյդ առաջարկին ժողովոյդ քուէ՛ն պիտի ենթարկեմ:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Օրինական դիտութիւնն մ'ունիմ: — Որ և է խնդրոյ մը վրաց վիճարկանութել յետոց միայն կրնայ առաջարկ մը գալու ոչ թէ փիճարանութեան սկիզբն: Հաւեաւ-

բար, ըստ ոյսմ՝ Գուրգէն է Փէնտի առաջարկն ալ, խնդրոյն վրայ վիճարանուելէ վերջն որ տք էր ներկայանար մեղ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Մէկբեռն է Փէնտի, Զեր այդ դիտազրթիւնն սխալ է. օրէնքն բացարձակ էրավիւ կը տրամադրէ որ ո և է առաջարկ որ երկրորդով մը կունենայ, կը յդուի Զեռնահամ Դիւանին կամ յատուկ Յանձնաժողովց մը քննութեան : Արեմն այս պարագայիս մէջ ևս Դիւանն չէ կարող տարրեր կերպիւ շարժիւ :

**ԹՈՐՈՍԵԱՆ Յ. Էֆ.** — Դիւանին դիտազրթիւնն շատ օրինական է : Եթբ առաջարկ մը կը ներկայացաւի որ կրինող մը կոչենայ, այդ առաջարկն քուի, կը զրուի. Հետեւարոր այնպէս պէտք չ ընել և այժմ, վասն զի արուելիք սրաշումէն կախում սկսի ունենայ թէ խնդրոյն մէջ մտնել հարու է կամ թէ ոչ :

**ԹԱԴԿՈՍԵԱՆ Ռ. Էֆ.** — Խնդրոյն քննութիւնն Յանձնաժողովց մը յշելու մասին եկած առաջարկութեան ես ալ չեմ. Հակառակիւ, բայց Ախուուքն եկած այս պատշաճութիւն թէրի կը գտնեմ և կառաջարկիմ վերաբարձնել զայն առ Ախուուն, առելի ընթարժուկ և մանրամասն տեղեկագիր մը պահպանչելով : Հոս ինչ որ կը կարգացաւ, երկարութ որն կը հասարակաւի ի լավքիս և հետեւարութիւն ոք կը հանդեսնու : Ուրեմն եթբ տեսնաւիթէ Վակար Սրբազնի համոր Ամենապատիք ամսանութիւնն առ է Մէկբանեղէն ԱԾրաբազնի համար ոչ, միթէ արգային արժանարարութիւնն, այսինքն ներքին մարդն չվիրա՞ւթիւ :

**ԱՍՅԱՆԵՐ.** — Քուէ՛, Յանձնաժողովոյ մը ընտրաթեան առաջարկն քուէ՛ դրէք :

**ԹՆԿՐԵԱՆ Ա. Էֆ.** — Խնդրոյն վասիկութիւնն և ծանրութիւնն յիշեցուց արդէն Ս.

Պատրիարք Հայուն, ուստի չեմ ուզեր ծանրանալ այս կէտիս վրայ, միմիայն սա չափն կը յիշեցնեմ թէ երբ վերջին անգամ Բարսմեանց Սրբազնի կողմանէ կողմանէ տեղեկագիր մը եւ կա Տ. Մէրիբանդէկ Սրբազնի ընտրութիւնն անացանդ մասնաւութիւնուու մը չափանուու մը յացնել . . .

**ՓԱ.ՓԱԶԵԱՆ Ս. Էֆ.** — (Առ Թնկրեան էֆ.) Հսկէ որ զիսէիթ կանուա :

**ԹՆԿՐԵԱՆ Ա. Էֆ.** — Հսկէ չեմ ուզեր թէ զիսէիթ : Այլ սրովհետեւ Կաթոլիկոսի ընտրութիւնն համարէն Աղքին ընտրութեամբ կը մնի և սրովհետեւ այս ժաղակ Թարթրոց Հայոց ներկայացուցիչ մարմինն է, ուստի խոհեմութիւն էր մի անգամ ալ զմեղ ընտրալ ժողովրդեան դիմել . . .

**ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ.** — (Ընդմիջելով) Պիտի պարտաւորիմ զօնեղ ի կարգ հրամիրել Թթնակրեան է Փէնտի, եթբ կըսէք թէ միանգամ ալ ազգին կամքն հարցնելու էր : Ոչոր է միանգամ ընդ միշտ զիսնալ թէ Աղքին այս ժաղակ է և Զեր յայտարարութիւնն Աղային ժաղակ յաղաց իրաւասութեան զիմ անարգանք մ'է . ուստի բնաւ չեմ ներէր Զեր այդ յայտարարութեան :

**ԹՆԿՐԵԱՆ Ա. Էֆ.** — Ուրեմն ես ալ առաջարկութիւն մ'անիմ որ նոյնական կը ներկայեմ ժաղակուց :

**ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ.** — Բնաւ թոյլ չեմ կըր նար տալ որ և առաջարկութիւն ներկամ ցնէք :

**ԹՆԿՐԵԱՆ Ա. Էֆ.** — Բայց ի՞նչու:

**ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ.** — Վասն զի միմիայն սա երկու կետերաւ վրայ կարծիք յայտնելու իրա-

ւունք ունիք , այն է թէ՝ պէտք է՞ խնդիրն Յանձնածովովց մը , քննութեան յղել թէ ո՞չ Ժօղովոց մէջ վիճաբանութեան ենթարկել զայն : Եւ չէք կրնար վերջի պահան ասորեր ոգուվ ասածարկ մը բերել :

(Թնդիրեան էֆ. վերստին կը փորձէ ընթեռնել իւր առաջարկութեան զիք , բայց զանազան հաստաբներէ երեսինաանք բռն կը պահանջէն ) .

ԱՏԵԽԱՊԵՏ Էֆ. — Տակաւին խնդրոյն վրայ խօսք ուզանեեր կան , և մես կողմանէ աւ վիճաբանութեան փակումը կուզուի :

Աւասի օրոնք որ վիճաբանութեան փակումը կուզէն , թուզ յապանեն իրենց ձեռնուագիտ հաւանութիւնն :

Հետեւար քուէարկութիւն կատարուեալ , ժաղավար Յ բաւէի դէմ 30 քուէազ ԿՈՐՅՈՒ վիճաբանութիւնն :

ԱՏԵԽԱՊԵՏ Էֆ. — Այժմ , օրոնք որ ըստ առաջարկութեան Գորդէն է Քիչնարի , կուզէն խնդրին Յանձնածովովց մը քննութեան յղել թուզ համին նայակէս յայտնել իրենց կամէն :

Քուէարիութիւն կատարուելով , Ժողովն Յ քուէի դէմ միաձայնութեամբ ԿԸՆԴՈՒԽՆի Գորդէն Յ է Քիչնարի կողմանէ Ներկայացեալ բանաձնն և բառ այն , ԿՈՐՅՈՒ է խնդրին յանձնել Յանձնածովովց մը քննութեան , օրուէս զիմնչւ 15 օրէն առարկելով իւր աշխատութիւնն արդիւնքն առեկապրէ իրեն :

(Յէտ ժողովութեան )

ՍԵՎԱՃԵԱՆ Կ. Էֆ. — Կորեոր վիտապութեան մը համոր խօսք կուզեմ : Ուշար է գիտեալ թէ մենք ոչ թէ Գորդէն է Քիչնարի բանաձնն իւր ամրազնութեարն քուէարկեցինք , այլ միայն ինդղուսն բննութիւնն Յանձնածովովց մը յղելուան :

ԳՈՒՐԳԻՆ Յ. Էֆ. — Ոչ , ոյզուէս չէ : Փողովն նոյնութեամբ ընդունեց իմ բանձնաւն :

ԱՏԵԽԱՊԵՏ Էֆ. — Այս , նոյնութեամբ ընդունեած է :

ԱՏԵԽԱՊԵՏ Էֆ. — Իսկ այժմ Դիւտանս Զեր կներկայի Յանձնածովովց տասն երկու անգամոց ցանկ մը : Օրուն վրայ , եթէ Ժօղովդ դժողովութիւնն մը չանի , քատէի պիտի զնիմ :

ԱՄԵԽԱՊԵԼԻ է Քիչնարի կը նթեանու Մայր-Դիւտանի կողմանէ պատրաստեալ հետեւալ ցանկն :

- 8. Խորէն Արք-Եպիս . Նոր-Պէյ
- 8. Մատթէոս Եպիս . Իմիլլեան
- 8. Յակոբ Վլգ . Աշոտ Փափաղեան
- 8. Յայշանինէս Վչչ . Մշեան
- Գաղրիէլ է Քիչնարի Նորատանիւնիւն
- Յարութիւն » Մէրեէմ-Պալի
- Յարութիւն » Թիրեարեան
- Յովհաննէս » Թրուսեան
- Կորոնիւն » Ալլվահեան
- Սելեսիւն » Փափաղեան
- Մարիսա » Աղարէգեանց
- Յակոբ » Գորդէն

ԱՏԵԽԱՊԵՏ Էֆ. — Շատ լաւ , շատ լաւ է :

ԱՄԵԽԱՊԵԼԻ է Քիչնարի բաւէի կը զնէ ոյն ցանկն օրինատրութիւնն , որ ԿԻՆԴՈՒԽՆ անձնայնութեամբ :

Ցես քուէարկութեան , Գորդիէլ է Քիչնարի Նորատանիւնիւն կը յայտնէ թէ ինքն իւր Քաղաքական Ժաղավար Գիւտանի անդամն , չէ կուրու մասնակիլ Յանձնածովովց աշխատութիւնն :

Ամեայն ԱՄԵԽԱՊԵԼԻ է Քիչնարի կը յայտարարէի թէ Կորսական Ժաղավար ԱՄԵԽԱՊԵԼ Արքունին ալ անդամն կարգուած լինեալ նայն Յանձնածովովցն , իւր Ներկայութիւնն անհրաժեշտ է :

ԱՄԵԽԱՆՔ կը վերնայ ժամ 6ին , յաջորդ նիստն 15 օրէն ի գոնիստ գումարելու որոշմամբ :

- |            |               |
|------------|---------------|
| ԱՄԵԽԱՊԵԼԻ  | ԱՄԵԽԱՊԻ       |
| Յ. ԳՈՒՐԳԻՆ | Տ. ԵՈՒԽՈՒԹԵԱՆ |

# Ն Ի Ս Ժ

20 Մեղամբեր 1885

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵՐՊՈՒՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ  
ԱԿԵՂԵՑԱԿԱՆՔ

Ա. Վ. Վիճակ

- 1 Սիմէօն Եպո. Աչքիրեան
- 2 Արիստուիս Եպիս. Գերձակէն. ԲՊ
- 3 Գէորգ. Վրդ. Խըմէնեան Բ
- 4 Խոշատուր Քահ. Տ. Գարբիէլն.
- 5 Վ. Վ. Վիճակ
- 6 Խորդէն Արքեպիսկոպ. Նար-Պէջ
- 7 Մատթէոս Եպո. Խղմրլեան
- 8 Յովհաննէս Քահ. Մկրտչան
- 9 Գրիգոր » Աձմեան
- 10 Յակոբ. Ա. Փափառեան
- 11 Խորդէն Քահ. Փէջլիկանեան Բ Պ
- 12 Յովհաննէս Քյ. ՇահպազեանԲ
- 13 Վ. Վ. Վիճակ
- 14 Յովհաննէս Վ. Արքառողի
- 15 Սահմակ Քհ. Տ. Սարգսեան
- 16 Վ. Վ. Վիճակ
- 17 Յովհաննէս Վարդ. Այգաղեան
- 18 Գարեգին » Թաթարեան
- 19 Սուքիսոս Քահ. Ստեփանեան
- 20 Գարիբէլ » Խանձեան Բ Հ

Բ Բացակայութիւն առաջն :  
2 » Երկրորդ :  
Պ » բանաւոր պամառաւ :

ԸՆԹԱՐԱԾՈՅՆ Բ

Ա. Վ. Վիճակ

- 21 Յակոբ Գուրգէն
- 22 Յ. Աշրեէմ. Գուլի
- 23 Մինաս Երազ
- 24 Խաչիկ Խամարական
- 25 Միհրան Վարդապարեան
- 26 Մկրտիչ Կիւրծեան
- 27 Երամյ Ճենապէեան Բ
- 28
- 29
- 30
- 31
- 32
- 33
- 34
- 35
- 36
- 37
- Բ. Վ. Վիճակ
- Պէջլիքաշ
- Բարսեղ Հալածեան
- Յովհաննէս Գէկեան
- Նշան Պարմանեան
- Վէջէն Օրմանեան
- Մնաչքերիմ ՄանուկեանԲ
- Համբարձում ՄարգարեանԲ
- Մանուկ Ալանեան Բ Հ
- 62
- Միջազիւլ
- 63 Տիգրան Եռուսէֆեան
- 64 Մկրտիչ Գայանձեան Բ 3
- 65 Մկրտիչ Ճանըմեան
- 66 Սուկիս Տամատեան
- 67 Յարութիւն Նորատունկ.
- Պէջօզ Լ. Ղալարիս
- 68 Միքայէլ Մամիկոնեան
- Դ. Վ. Վիճակ
- Բուզկուննանուզ Է. Խնատիկ
- 69 Մկրտիչ Մէզպուրեան
- 70 Միմոն Մագսուսեան Բ Պ

Գատըզիւղ	ԳԱԿԱՌԱԿԱՆ ԵԽՍՓՈԽԱՆՔ	Նիկոմիդիա
71 Գառնիկ Ցովակիմեան	Ա. Վ. Հաճակ	120 Կարապետ Ս. Խ. Մ. Ը. Ճ. Ճ. ճ. ճ. ճ.
72 Կարապետ Հաղաքեան Բ. Պ.	Զմշկածագ	Ալին
Նարիլ-Գաբու	401 Գաղատիա	121 Յակոբ Գորեան
73 Միհրան Տէօքմէճեան	402 Ալունա	Դարախիսար
Ենին-Մանալի Սամարիոյ	403 Սիերդ	122 Կարապետ Երեցեան
74	104 Մատթէոս Ալէքսանեան	Արաբկիր
Թօփ-Գափու	Եօգնատ	123 Կարապետ Խաչիկեան
75 Յարութիւն Թիրեաքեա՞ն Բ	405 Մայարիա	Բաղեշ
Էյուս Ս. Եղիա և Ս.	406 Գէորգ Վ. արդանեան	Դ. Վ. Վ. Վ. Վ. Վ. Վ.
Աստուածածին	Խզմիր	Կեսարիա
76 Գուրու-Զեղմի	407 Պօղոս Տիւպէրեան	Խարբերդ
77 Կարապետ Արվաճեան	Եղիպոտոս	Պալրէսէկիր
Հիսար և Պօյաձի-Գիսդ	108 Արահամ Մուրատեան	125 Տիգրան Գ. Մինանեան
78	Բ. Վ. Հաճակ	126 Կեսարիա
Նոր-Գիւղ և Սրենիա	Պրուսա	127 Պատրիքան
79 Մելուշ Տէմիրէլազահնաբ	109 Քրիստոսուր Ղազարոսեան	128 Ստեփան Գօրջեան
Պալտս	Ե. Պոկիսա	Մոռշ
80 Մկրտիչ Իւրմէւեան Բ 3	110 Ամափաւ	129 Ստեփան Փափազեան
81 Ռէթէոս Թագէոսեան	111 Համբարձում Ալաճաճեան	Տիվրիկ
2 Ներսէ Երեցեան	Բալու	130 Նշան Գարագաչ
Քարակիօմբինի	112 Եղիսիա	Զերուն և Մարաշ
83 Յովհաննէս Թորոսեան	113 Յակոբ Խ. Թիւթիւճեան	131 Տրաղիզօն
84 Կարապետ Փանոսեան Բ 2	Մանճըլիս	Ե. Վ. Հաճակ
Ե. Վ. Հաճակ	114 Համբարձում Ալաճաճեան	Պաղտսատ
Սամարիա	Բալու	133 Կարապետ Սէթեան
85 Յակոբ Արշակ	Եղիսիա	Տիգրանակերտ
86 Յովհաննէս Նուրեան Բ	115 Մանճըլիս	134 Միհրան Հօղանեան
87	Համըն	Վ. ան
88	116 Խեթէոս Պէրպէրեան	135 Մարկոս Աղաբէգեանց
89	Երգմիկ	Աղամար
90	117 Սերովը Աշխաւորեան	Հալեպ և Այնքապ
91	Ք. Վ. Հաճակ	137 Սեբաստիա
92	Կարին	138 Մկրտիչ Յ. Սէթիքեան
93	118 Աւետիս Թշնկրեան	Ռուսանոց
94	Աղրինապօլիս	139 Բաբերդ
Խասզիւղ	119	140
95 Ռուբէն Պուլկուեան		
96 Նիկոլոս Թիւլպէնտեան		
97 Նշան Փափաղեան		
98		
99		
100		





## ԱՀԳԱՅԻՆ ՊԱՐՏՈՒԹՅԻՆ

### Ա.ՆԴԱՄՄԲ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԾ

1.	Տ.	Խորէն	Արքեպոս.	Նար—Պէջ	Ա.	Արքականություն
2.	»	Սիմէնն	Եպոս.	Սէփէրեան	Բ.	»
3.	»	Մատթէոս	»	Իզմիրեան		
4.	»	Գարեգին	Վրդ.	Թաթարեան		
5.	»	Վահան	»	Տինասնեան	Ա.	Արքականություն
6.	»	Տաճատ	»	Աւկանեան	Բ.	»
7.	»	Թակոր	»	Ա. Փափալեան		
8.	»	Ցովհաննէս	»	Արշարունի		
9.	»	Ցովհաննէս	Քէյ.	Միրեան		
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան		
11.	»	Սուքիաս	»	Ստեփանեան		
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան		
13.	»	Խորէն	»	Փէհիվանեան		
14.	»	Կարապետ	»	Սէթեան		

### Ա.ՆԴԱՄՄԲ ՔՈՂԱՔՈԿԱՆ ԺՈՂՈՎՐԾ

1.	Ցովհաննէս	Եփէնտի	Նուրեան	Ա.	Արքականություն
2.	Գարբիէլ	»	Նորատունկեան	Բ.	»
3.	Համալասպ	»	Պալլարեան	Ա.	Արքականություն
4.	Ցովհաննէս	»	Պօյաճեան	Բ.	»
5.	Արիկ	»	Ռւնճեան		
6.	Ալիքսան	»	Սաքաեան		
7.	Խաչիկ	»	Կամսարական		
8.	Կաստանդ-	»	Կաստանդեան		
9.	Միհան	»	Սէթեան		
10.	Ցակոր	»	Ֆրէնկեան		
11.	Սերովէէ	»	Կիւլպէնկեան		
12.	Սինեքերիմ	»	Մանուկեան		
13.	Տիգրան	»	Բարաղամեան		
14.	Տիգրան	»	Կիւմիւշկերտանեան		

ԱՐԵՎԱԿԱՆ ԱՌԱՋԱՅԱ

**ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**

**Օ Ր Ո Կ Ա Ր Գ Ա Ր Գ**

Խնդիր Կակողիկսական . ( Գոնիակ )

մանաքանչ	շ	փութան	ա
մանախանչ	ա	սանիան	ա
մանախանչ	օ	գուլուն	ա
մանախանչ	շ	վեճմարտ	ա
մանախանչ	ա	ակրագան	ա

**ԾՈՐԱՐԱ ԺԱՄԱԴՐՈՒՅ ՔՑԱՐԵՐՈ**

մանաքանչ	մանաքանչ	փութան	սանիան
մանախանչ	մանախանչ	սանիան	վեճմարտ
մանախանչ	մանախանչ	գուլուն	սանմաշին
մանախանչ	մանախանչ	վեճմարտ	վեճուն
մանախանչ	մանախանչ	սանիան	մանուշ
մանախանչ	մանախանչ	գուլուն	մանուշ
մանախանչ	մանախանչ	վեճմարտ	մանուշ
մանախանչ	մանախանչ	սանիան	վեճուն
մանախանչ	մանախանչ	գուլուն	մանուշ
մանախանչ	մանախանչ	վեճմարտ	մանուշ

